



ՄՊՀՀ մամուլ թողարկում # 9

Երևան, Հայաստան – 4 դեկտեմբեր 2007թ.

Հաշմանդամների միջազգային օրը նշանավորող միջոցառումներ Երևանում. Հայաստանի կառավարությունը նորացնում է իր պարտավորությունները հաշմանդամների խնդիրների հանդեպ

Երևան – դեկտեմբերի 3-ը՝ ՄԱԿ-ի կողմից հայտարարված Հաշմանդամների միջազգային օրը, Երևանում նշվեց մեծ միջոցառում, որը տեղի ունեցավ Երևանի օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի Ա. Խաչատրյանի անվան դահլիճում: Միջոցառումը նշանավորեց ՀՀ կառավարության և հասարակական կազմակերպությունների միջև նոր գործընկերության սկիզբը: Համերգին, որն ընդմիջվում էր ժամանակակից հայ հայտնի երգիչ-երգչուհիների և հայտնի հաշմանդամ երգիչների ելույթներով ու բարձրաստիճան պաշտոնյաների հղումներով, ներկա էին աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Աղվան Վարդանյանը, հաշմանդամների հարցերի ջատագովությանը և աջակցությանը ակտիվորեն զբաղվող 45 հայաստանյան հասարակական կազմակերպություններ, համայնքային և մարզային իշխանությունների, միջազգային գործակալությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ամեն տարի Հաշմանդամների միջազգային օրը նշելու նպատակն է բարձրացնել հաշմանդամ անձանց հարցերի մասին ընթերցումը և մոբիլիզացնել աջակցությունը հաշմանդամություն ունեցող մարդկանց արժանապատվության, իրավունքների և բարեկեցության ապահովման գործում: Հաշմանդամների միջազգային օրը նաև միջոց է մեծացնելու իրազեկությունն այն օգուտի մասին, որ երկրներն ամենայն հավանականությամբ ձեռք կբերեն, հաշմանդամություն ունեցող մարդկանց քաղաքական, մշակութային, սոցիալական և տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում ընդգրկելու շնորհիվ:

Այս տարի Հաշմանդամների միջազգային օրվան նվիրված միջոցառման ժամանակ առանձնահատուկ շեշտ դրվեց հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման և այն եղանակների վրա, որոնց միջոցով հնարավոր կլինի օգուտելի շնորհների այս անտեսված աղբյուրից: Նշված նպատակները սահմանված են ՄԱԿ-ի վերջերս ընդունված Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոմվենցիայի, որի տակ ստորագրություն է դրել նաև Հայաստանը որպես ՄԱԿ-ի անդամ-երկիր, 27-րդ հոդվածում: Այդ հոդվածով ճանաչվում է հաշմանդամություն ունեցող մարդկանց հավասար հիմունքներով աշխատանք ձեռք բերելու և այն պահելու իրավունքը: Ավելին, այն շեշտում է հաշմանդամություն ունեցող մարդկանց իրենց ազատականորեն ընտրած աշխատանքով ապրուստի միջոցներ վաստակելու և ընդունելի ու ընդունող միջավայրում աշխատելու իրավունքը:

Երևանում դեկտեմբերի 3-ի միջոցառման նախաձեռնությունը և կազմակերպման պատիվը պատկանում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամների և տարեցների հարցերով վարչությանը (ԱՄՀՆ): ԱՄՆ ՄՁԳ Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգների հզորացման (ՄՊՀՀ) ծրագրի, World Vision և Counterpart International կազմակերպությունների, Նարեկացի մշակութային ասոցիացիայի հետ համագործակցությամբ: Հաշմանդամների միջազգային օրվա հանդիսության համար նախապատրաստվելիս ՄՊՀՀ թիմն առաջնորդվում էր չորս հիմնական սկզբունքով՝ «ներգրավվել, կազմակերպել, տոնել և գործել»:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Աղվան Վարդանյանն իր խոսքում ներկայացրեց նոր մոտեցումները և ներկա իրավիճակն ու խնդիրները, որ կանգնած են կառավարության առջև հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ընդգրկելու ավելի լավ եղանակներ որոնելիս:

Դեկտեմբերի 3-ի միջոցառումն ընթանում էր «Ներդաշնակ հասարակություն՝ միացյալ ուժերով» կարգախոսի ներքո և իրենից ներկայացնում էր երաժշտական ներկայացումների և հաշմանդամ անձանց իրավունքների, աշխատանքի հավասար հնարավորությունների, ավելի լայն մատչելիության և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունների մասին ելույթների ու էկրանավորված հաջողության պատմությունների մի համակցություն: Ամբողջ երեկոյի ընթացքում կարմիր թելի մման անցնում էր հասարակության մեջ հաշմանդամ անձանց տնտեսական, սոցիալական և մշակութային լրիվ ինտեգրման գործում Հայաստանում նկատվող կայուն առաջընթացի գաղափարը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF LABOR & SOCIAL ISSUES
OF THE REPUBLIC OF ARMENIA



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ԱՄՆ ՄՁԳ ՀԱՅԱՍՏԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ՀՁՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

USAID ARMENIA, SOCIAL
PROTECTION SYSTEMS
STRENGTHENING PROJECT

«Հայաստանում հաշմանդամ քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը և ջատագովությունը Մոցիսյակյան պաշտպանության համակարգերի հզորացման ծրագրի հիմնական խնդիրներից է», ասաց ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ ծրագրի ղեկավար տկն. Էմի Ռեմմը: «Մենք չափազանց ուրախ ենք, որ Հաշմանդամների միջազգային օրվա այս հանդիսությամբ Հայաստանի կառավարությունը, մի շարք կազմակերպությունների և շահագրգիռ կողմերի հետ միասին, նպաստեց Հայաստանի ևս մեկ քայլ առաջ գնալուն բոլորի համար հավասար հնարավորությունների և հարգանքի հաստատման ուղիով»:

###